

Երևանի Մետրոպոլիտենի Վերակառուցման Ծրագիր, III Փուլ

Երկիր՝
Հայաստան

Ծրագրի համարը՝
45742

Բիզնես ոլորտ՝
Համայնքային և բնապահպանական ենթակառուցվածքներ

Ծանուցման տեսակը (պետական/մասնավոր)՝
Պետական

Բնապահպանական կարգ՝
B

Խորհրդի նիստը նշանակված է՝
2016թ. հունվարի 13-ին

Կարգավիճակը՝
Անցել է կոնցեպտուալ համապատասխանության քննությունը, սպասվում է
վերջնական ուսումնասիրություն:

Ծրագրի ամփոփված փաստաթղթի հրապարակման ամսաթիվը՝
2015թ. հոկտեմբերի 06-ը

Ծրագրի նկարագիրը

ՎԶԵԲ-ը քննում է մետրոպի վերակառուցման երրորդ ծրագրի միջոցով «Երևանի
մետրոպոլիտեն» ընկերությանն աջակցելու հնարավորությունը: Ծրագիրը
կներառի շարժակազմի արդիականացումը, շարժակազմի տեխնիկական
սպասարկման դեպոյի վերանորոգումը, էլեկտրական ենթակայանների, հոսանքի
մալուխների և օդափոխման համակարգերի վերակառուցումը, ռելսուղիների
սպասարկումը, ինչպես նաև մետրոպի կայարաններում նոր շարժասանդուղքների

տեղադրումը: ՎԶԵԲ-ը Հայաստանի Հանրապետությանը կտրամադրի մինչև 7 միլիոն եվրո վարկ «Երևանի մետրոպոլիտեն» ընկերության նպատակների համար:

Երևանի քաղաքապետարանը Ծրագրի աջակցության համաձայնագիր կստորագրի Բանկի հետ: Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) դիտարկում է 7 մլն եվրո զուգահեռ վարկ տրամադրելու հնարավորությունը, և ՎԶԵԲ-ն ու ԵՆԲ-ն կդիմեն միջազգային դոնորներին 7 միլիոն եվրո ներդրումային համաֆինանսավորման դրամաշնորհ ստանալու խնդրանքով՝ աջակցելու ծրագրի իրականացմանը, որի արդյունքում հնարավոր կլինի կատարել մետրոպի վերակառուցման անհետաձգելի աշխատանքները:

Ծրագրի նպատակները

Վարկերի և դրամաշնորհի միջոցներով կֆինանսավորվեն վերակառուցման կարևորագույն աշխատանքները՝ ապահովելու Երևանի մետրոպի համակարգի անվտանգ շահագործումը: Ծրագիրը կհամալրվի Տեխնիկական համագործակցության փաթեթով, որն ընդգրկում է իրականացումը, ինչպես նաև ընկերության կորպորատիվ զարգացման աջակցությունը: Ընկերությանը նաև աջակցություն կցուցաբերվի Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում:

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Անցումային շրջանի վրա ազդեցությունը կլինի հետևյալը.

- շրջանակներ շուկաների համար՝ հստակ սահմանված Հանրային ծառայությունների պայմանագրի (PSC) մշակման միջոցով, որը հարմար կլինի տրանսպորտի բազմաթիվ տեսակների համար:
- շրջանակ շուկաների համար՝ Քաղաքապետարանի տրանսպորտի վարչությանը ինստիտուցիոնալ աջակցություն ցուցաբերելու միջոցով:
- Էներգիայի կրճատված սպառումը որպես արդյունք, որը կարելի է ի ցույց դնել (կՎտժ / կմ –ով արտահայտված):

Շահագրգիռ կողմերի մասնակցության ծրագրի իրականացում՝ երևանցիների շրջանում կայուն քաղաքային տրանսպորտի մասին իրազեկման բարձրացման նպատակով:

Հաճախորդ

ԵՐԵՎԱՆ ՄԵՏՏՐՈ

Երևանի մետրոպոլիտենը, «Երևանի մետրոպոլիտեն» ընկերությունը:

ՎԶԵԲ-ի տրամադրած ֆինանսավորումը

7 միլիոն եվրո

ՎԶԵԲ-ը քննում է 7 միլիոն եվրո սուվերեն վարկ տրամադրելու հնարավորությունը: Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) դիտարկում է 7 մլն եվրո զուգահեռ վարկ տրամադրելու հնարավորությունը, և ՎԶԵԲ-ն ու ԵՆԲ-ն կդիմեն միջազգային դոնորներին 7 միլիոն եվրո ներդրումային համաֆինանսավորման դրամաշնորհի ստանալու խնդրանքով՝ ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով:

Ծրագրի ընդհանուր արժեքը

22,500,000 եվրո

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 22.5 մլն եվրո ներառյալ տեխնիկական համագործակցության միջոցները: ՎԶԵԲ-ը կձգտի համաֆինանսավորել ծրագիրը ԵՆԲ-ի վարկի և միջազգային դոնորից ներդրումային դրամաշնորհի օգնությամբ:

Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ամփոփ նկարագիր

Ծրագիրը ստացել է B կարգի դասակարգում (FUI 2008): Բնապահպանական և սոցիալական անկախ ուսումնասիրությունը ներկայումս ընթացքի մեջ է: Այն կենտրոնացած է նախկինում համաձայնեցված Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանի (FUI 2008) իրականացման ուսումնասիրության վրա, ինչպես նաև տեխնիկական ուսումնասիրության արդյունքում բացահայտված՝ կոնկրետ ներդրումային բաղադրիչների պոտենցիալ օգուտների և բացասական ազդեցությունների վերլուծության վրա: Չնայած կարող են լինել չնչին, կարճաժամկետ և տվյալ կայքին հատուկ հետևանքներ, օրինակ՝ աղմուկի և փոշու բարձր մակարդակներ շինարարական և վերականգնողական աշխատանքների ընթացքում, Ծրագիրը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի աշխատակիցների և հանրության համար առողջության և անվտանգության հետ կապված օգուտներին, ինչպես նաև դեպոյի, մետրոյի ուղևորափոխադրման, կայանների սարքավորման և ծառայությունների ավելի բարձր էներգաարդյունավետությանը:

Այս փուլում դեռ առկա չեն մրցույթի միջոցով գնվելիք նոր սարքավորման ճշգրիտ տեխնիկական բնութագրերը, սակայն նախնական հաշվարկները, որոնք հիմնված են ցանցի էլեկտրաէներգիայի սպառման պլանավորված կրճատման վրա, ցույց են

տալիս, որ դեպոյի արդիականացումը 1320.08 տոննայով կկրճատի ածխաթթու գազի արտանետումները միայն ջեռուցման սեզոնի ընթացքում: Էներգիայի լրացուցիչ խնայողությունը հնարավոր կլինի նաև ջեռուցման սեզոնից դուրս, քանի որ էներգաարդյունավետ հերմետիկ մեկուսացումը հնարավորություն կտա օպտիմալացնել օդորակումը և կհանգեցնի էներգիայի սպառման նվազեցմանը: Այս ներդրումային բաղադրիչը կհանգեցնի նաև դեպոյի աշխատակիցների առողջապահության և անվտանգության բարելավմանը:

Շարժասանդուղքների համակարգի բարելավումը թույլ կտա նվազեցնել ածխաթթու գազի արտանետումների սպառումը տարեկան 1242.06 տոննայով: Այն նաև հնարավորություն կտա բեռնաթափել մետրոյի կայաններ մտնող և դուրս եկող ուղևորների մեծացած հոսքը և բարելավել սպասարկման որակը:

Մետրոյի օդափոխման համակարգի բարելավումը հնարավորություն կտա «Երևանի մետրոպոլիտեն» ընկերությանը կրճատել ածխաթթու գազի արտանետումները տարեկան 1468.52 տոննայով: Օդափոխման համակարգի բարելավումը նաև զգալիորեն կբարձրացնի գործառնությունների անվտանգությունը թե՛ մետրոյի աշխատակիցների և թե՛ ուղևորների համար:

Առաջարկվող ներդրումային ծրագիրը նաև կնպաստի նախկինում համաձայնեցված ԲՍԳԾ-ների իրականացմանը:

Տեխնիկական համագործակցություն

Ծրագրում ներառված են տեխնիկական համագործակցության (ՏՀ) հետևյալ առաջադրանքները.

- Նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրություն: Նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրության նպատակն է գնահատել պահանջարկի կանխատեսումը, փոխադրման հնարավորությունները, ցանցի ինտեգրման պլանավորումը, շահագործման ծրագիրը, շարժակազմի կարիքները, դեպոյի կարիքները, ծրագրի արժեքը և ֆինանսական ու տնտեսական վերլուծությունները: 200,000 եվրո ֆինանսավորում՝ ՎԶԵԲ-ի բաժնետերերի հատուկ հիմնադրամի (ԲՀՀ) կողմից:
- Տեխնիկական ուսումնասիրություն՝ գնահատելու մետրոյի գործող համակարգի վերակառուցման լրացուցիչ կարիքները, այդ թվում, շարժակազմի և շարժիչավոր վագոնների արդիականացումը, շարժակազմի և քարշակի վերազինումը, կայարանների և թունելի օդափոխման համակարգի փոխարինումը /արդիականացումը, կայարանների շարժասանդուղքների փոխարինումը/վերազինումը և շարժակազմի սպասարկման դեպոյի արդիականացումը: 74,000 եվրո ֆինանսավորում՝ Շվեդիայի կառավարության կողմից:

- Ծրագրի իրականացման աջակցություն: Միջազգային խորհրդատուները կաջակցեն ծրագրի իրականացման խմբին տեխնիկական նախագծման, գնումների, մրցույթների նախապատրաստման և գնահատման, պայմանագրերի կնքման և վարչարարության, ֆինանսական վերահսկողության, ծրագրի կառավարման և հաշվետվությունների պատրաստման գործընթացներում: 1 մլն եվրո ֆինանսավորում տրամադրվելու է ծրագրի համաֆինանսավորողի կողմից:
- Շահագրգիռ կողմերի մասնակցության ծրագիր: Շահագրգիռ կողմերի մասնակցության ծրագրի իրականացում՝ հանրության իրազեկման բարձրացման նպատակով: 250.000 եվրո, որը առաջարկվում է ֆինանսավորել միջազգային դոնորի կողմից:

Ընկերության ներկայացուցչի կոնտակտային տվյալները

Արմինե Պարսյան

armine.parsyan@gmail.com

+37410273081

+37410273081

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 347033, Բաղրամյան պ. 78

Բիզնես հնարավորություններ

Գնումների կամ մրցույթի հնարավորություններ

Այցելե՛ք [EBRD Procurement](#)

Տեղեկատվություն՝ հեռ.՝ +44 20 7338 6794; ֆաքս՝ +44 20 7338 7472, Էլ.փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր տեղեկատվություն

Գնումներին չառնչվող տեղեկատվություն ՎՋԵԲ-ի ծրագրերի մասին.

Հեռ.՝ +44 20 7338 7168; Ֆաքս՝ +44 20 7338 7380

Էլ.փոստ՝ projectenquiries@ebrd.com

Հանրային տեղեկատվական քաղաքականություն (PIP)

Հանրային տեղեկատվական քաղաքականությունը ի ցույց է դնում, թե ինչպես է ՎՋԵԲ-ը հրապարակում տեղեկատվությունը և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի ավելի բարձրացնի իր ռազմավարության, քաղաքականության և գործունեության վերաբերյալ իրազեկումը:

Հանրային տեղեկատվական քաղաքականության տեքստին ծանոթանալու համար այցելե՛ք [Text of the PIP](#)

Ծրագրերի Բողոքարկման Մեխանիզմ (PCM)

ՎՋԵԲ-ը հիմնել է Ծրագրերի Բողոքարկման Մեխանիզմը (PCM), որպեսզի այն Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկա կամ հնարավոր վնասակարության մասին անհատներից կամ կազմակերպություններից ստացած բողոքների անկախ ուսումնասիրություն անցկացնի: ԾԲՄ-ին վերաբերող գործընթացի օրենքների ռուսերեն տարբերակին կարող եք ծանոթանալ այստեղ.

[Rules of Procedure governing the PCM | Russian version](#)

ԾԲՄ-ի ներքո բողոքները պետք է ներկայացվեն ՎՋԵԲ-ի ֆինանսավորման վերջին տրանշից ոչ ուշ քան 12 ամիս անց: Կարող եք կապվել ԾԲՄ-ի տնօրենի հետ (pcm@ebrd.com) կամ ՎՋԵԲ-ի համապատասխան մշտական գրասենյակի հետ, եթե վստահ չեք, թե ինչ ժամանակահատվածում հարկավոր է ներկայացնել բողոքը: